



98. ԶԸԼՖ ՂԱԶԱՐԻ ՆԱՂԸԸ

Կըլեր, չըլեր, մե Զըլֆ Ղազար կըլեր: Ինքը ջուլֆակ էր, շատ քյասիպ ըլելի: Մե օր մե պարկ վերցրելի, մե լոր թալելի պարկը, վերցրել էթալի: Էթալի խասնելի տևերի ամարաթին: Էտ տևեր իրյեք ախպեր ըլելին:

Ըսալի.—Տև' ախպերներ, ընձ վերցրե՛ք ծեղի ախպեր:

Տևերն էլ վերցրին, դարձրին ախպեր:

Մեկ օր տևերը կյալիսըն, իրանց խաքի խալավը կրակի վրա թափ ին տալիս:

Զըլֆ Ղազարի ասելի.—Տև' ախպեր, ծեղ տանը լու շատ կա, իմ վրան էլ քաշվիր է:

Տևերն ասին.—Զըլֆ Ղազա՛ր ախպեր, չորերըդ խանե՛, տյո՛ւ էլ թափ տու:

Զըլֆ Ղազարն ծյեռ թալելի, լորն ծոցեն խանելի թունդիր թալելի:

Տևերն ասելին.—Զըլֆ Ղազա՛ր ախպեր, մազյամ քու լվերն էդպես խոչո՞ր ին:

Զըլֆ Ղազարն ասելի.—Հա՛, իմ լվերն էդպես մեծ ին:

Տևերն ասելին մեկմեկու.—Ախպե՛ր, տրա լուն որ էտպես ուժեղ ու մեծ ի, ինքն ինչքան ուժեղ կըլնի: Բերեք էդոր այիրդ անենք, մեզնից էթա. վերչ մեր գլխին օյին կըխանի:

Պերյեսըն Զըլֆ Ղազարին ճոկյեսըն, մե քյալու ոսկի տալըսեն, տվեսըն տևերը իրանց փոքր ախպոր չլակը, ասելըն.—Տար Զըլֆ Ղազարին ճամփո՛ւ դիր:

Տանեսըն, խասուցեր են Զըլֆ Ղազարին իրա տունը: Տևը տիկը տանելի, տնելի Զըլֆ Ղազարի տունը:

Զըլֆ Ղազար տեին վերցրել խանել տուս, կնգան ուսուցյել, ասելի.—Ես տեին խանյեմ տուս, տյու տիկի ոսկին դարտիկ', փչի՛ տկի պերան, կապի՛, տի՛ դրադ:

Կնիգն տիկը դարդկելի, փչե, կապելի դրելի դրադ:

Զըլֆ Ղազար տեի հետ ներս գալելի:

Զըլֆ Ղազար ասելի տեին.—Իմ բաժին փարան քիչ եք տվել:

Թավքով զարկելի տկին, տիկ թռելի առիք, կպելի տեւի ճակ-
տին: Տեն տուռ-մուռ ճառտելով տուրս փախելի խասյեր է յուր
եղպարքներին:

Եղպարքներին ասելի.—Ջըլֆ Ղազարի փարեն քիչ տվելիք, նա
էլ հերսոտավ, Թավքով զարկեց տկին, տիկն ու օսկին թռավ առիք,
կպավ ճակտիս, ես էլ հազիվ փախա, ազատվա:

